

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
մայիսի 12-ի N 677 - Ն որոշման

«Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2003 թվականի  
մարտի 7-ի N 218 - Ն որոշման

## Կ Ա Ր Գ

### ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացը:

2. Ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության (այսուհետ՝ գործակալություն) կողմից՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի պահանջների համաձայն:

3. Ջրօգտագործման թույլտվությունը տրամադրվում է ջրօգտագործողի կողմից գործակալություն ներկայացված հայտի նախնական և վերջնական գնահատման հիման վրա:

4. Ջրօգտագործման թույլտվության հայտի ներկայացումը, ընդունումը և նախնական գնահատումը, հայտատուի ընտրությամբ, բացի թղթային տարբերակից կարող է կատարվել նաև էլեկտրոնային տարբերակով: Ջրօգտագործման թույլտվության հայտի ներկայացման, ընդունման և նախնական գնահատման էլեկտրոնային տարբերակի կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարը:

5. Ջրօգտագործման թույլտվության հայտը ներկայացնելուց հետո գործակալությունը 30-օրյա ժամկետում ջրօգտագործողին գրավոր տեղեկացնում է ջրօգտագործման թույլտվություն ստանալու մասին հայտն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ:

6. Ջրօգտագործման թույլտվության հայտի վերջնական գնահատման գործընթացն սկսվում է հայտին կից՝ սույն որոշման պահանջների համաձայն համապատասխան փաստաթղթերի (ամբողջական փաթեթի) առկայության դեպքում:

7. Հայտի ընդունումից և նախնական գնահատումից հետո գործակալությունը, 30-օրյա ժամկետում դրա մասին տեղեկացնելով հայտատուին, ապահովում է հասարակայնության ծանուցումը ջրօգտագործման թույլտվության հայտի մասին:

8. Հասարակայնության ծանուցման ժամանակ սպասվող ջրօգտագործման թույլտվության վերաբերյալ արձագանքների, կարծիքների բացակայությունը համարվում է տվյալ ջրօգտագործման վերաբերյալ հասարակայնության դրական կարծիքի դրսևորում:

9. Հասարակայնության ծանուցման ժամանակ սպասվող ջրօգտագործման թույլտվության վերաբերյալ այլ անձանց իրավունքների և օրինական շահերի կամ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրության խախտումը հիմնավորող բացասական կարծիքները քննարկվում են լիազոր մարմնի կողմից և, հաստատվելու դեպքում, հիմք են հանդիսանում ջրօգտագործման թույլտվության տրամադրումը մերժելու համար:

10. Գործակալության կողմից ջրօգտագործման թույլտվությունը ձևակերպվում է հասարակայնության ծանուցմանը հաջորդող 30-օրյա ժամկետում:

11. Ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
մայիսի 12-ի N 677 - Ն որոշման

«Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2003 թվականի  
մարտի 7-ի N 218 - Ն որոշման

## Կ Ա Ր Գ

### ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՐԿԱՐԱԶԳՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է ջրօգտագործման թույլտվության երկարաձգման գործընթացը:

2. Ջրօգտագործման թույլտվության երկարաձգման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության (այսուհետ՝ գործակալություն) կողմից՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի պահանջների համաձայն:

3. Ջրօգտագործման թույլտվության երկարաձգումը կատարվում է ջրօգտագործողի կողմից գործակալություն ներկայացված հայտի հիման վրա:

4. Ջրօգտագործման թույլտվության երկարաձգման հայտը ներկայացնելուց հետո գործակալությունը 30-օրյա ժամկետում ջրօգտագործողին գրավոր տեղեկացնում է ջրօգտագործման թույլտվության երկարաձգման գործընթացն սկսելու կամ մերժելու մասին:

5. Ջրօգտագործման թույլտվության երկարաձգման հայտի վերջնական գնահատման գործընթացն սկսվում է հայտին կից՝ սույն որոշման պահանջների համաձայն՝ համապատասխան փաստաթղթերի (ամբողջական փաթեթի) առկայության դեպքում:

6. Ջրօգտագործման թույլտվության երկարաձգման հայտի գնահատման ժամանակ գործակալությունը հաշվի է առնում իր համապատասխան տարածքային բաժնի կարծիքը՝ տվյալ ջրօգտագործողի կողմից ջրօգտագործման պայմանների կատարման վերաբերյալ:

7. Ջրօգտագործման թույլտվության երկարաձգման համար, եթե չեն խախտվել ջրօգտագործման պայմանները և ժամկետը, անհրաժեշտ է ներկայացնել սույն որոշման N 2 հավելվածի ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկի 7-րդ, 9-րդ, 16-րդ և 17-րդ կետերով սահմանված փաստաթղթերը:

8. Եթե ջրօգտագործման թույլտվության երկարաձգման հայտը ներկայացվել է ջրօգտագործման թույլտվության գործունեության ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 45 օր առաջ, ապա տվյալ ջրօգտագործման թույլտվությունը երկարաձգվում է: Նշված ժամկետից ուշ ներկայացված ջրօգտագործման թույլտվության երկարաձգման հայտերը սահմանված կարգով գնահատվում են որպես ջրօգտագործման թույլտվության տրամադրման հայտեր:

9. Ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների համաձայն:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
մայիսի 12-ի N 677 - Ն որոշման

«Հավելված N 5  
ՀՀ կառավարության 2003 թվականի  
մարտի 7-ի N 218 - Ն որոշման

Ձև



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ՀԻՂՐՈՆԵԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ»**  
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**  
**Անձնագիր N---**

աղբյուրի

Կազմման ժամանակը -----

I. Տեղադիրքը

1. Մարզ ----- տարածաշրջան -----ընակավայր -----  
----- տնտեսություն -----

2. Ստորերկրյա ջրերի հանքավայր -----
3. Գետավազան -----
4. Ջրավազանային կառավարման տարածք -----
5. Կոորդինատներ X----- Y----- H-----
6. Հեռավորությունը մշտական ջրհոսքից (գետից) կմ -----
7. Տոպոգրֆի համարը 1:100000 մասշտաբով -----
8. Աղբյուրի անվանումը -----
9. Հաշվետվության անվանումը -----
10. Հաշվետվության հեղինակը -----
11. Պետական գրանցման համարը -----

II. Աղբյուրի ընդհանուր բնութագիրը

1. Ջրաղբյուրի տիպն ըստ ճնշման -----
2. Ջրերի օգտագործման տիպը -----
3. Տեխնիկական վիճակը -----
4. Սանիտարական վիճակը -----
5. Կապտածի ձևը -----

- 6. Աղբյուրի ռեժիմը -----
- 7. Շահագործման ռեժիմը -----
- 8. Ծախսը և նրա չափման եղանակը -----

III. Երկրաբանական բնութագիրը

- 1. Երկրաբանական պայմանները -----

-----

-----

-----

- 2. Հիդրոերկրաբանական պայմանները -----

-----

IV. Ջրերի որակը

- 1. Նմուշարկման ժամանակը -----
- 2. Ջերմաստիճանը °C -----
- 3. Ջրածնային ցուցիչը (PH) -----
- 4. Ընդհանուր կոշտությունը, մգ. համ/լ -----
- 5. Չոր մնացորդը (փորձնական, մգ/լ) -----
- 6. Հոտը -----
- 7. Համը -----
- 8. Գույնը -----
- 9. Քիմիական տարրերի պարունակությունը, մգ/լ

Cl ----- SO<sub>4</sub><sup>''</sup> ----- H CO<sub>3</sub><sup>'</sup> ----- (Na+K)<sup>+</sup> ----- Ca<sup>2+</sup> ----- Mg<sup>2+</sup> ----- NH<sub>4</sub><sup>+</sup> -----

--- Fe<sup>2+</sup> ----- Fe<sup>3+</sup> -----

V. Աղային կազմի բանաձև (ըստ Կուրլովի)

M -----

VI. Լրացուցիչ տեղեկություններ

-----

-----

Կազմեց՝ առաջատար մասնագետ -----

Ստուգեց՝ հիդրոերկրաբանական բաժնի պետ -----

Տսօրենս -----»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2011 թվականի  
մայիսի 12-ի N 677 - Ն որոշման

«Հավելված N 6  
ՀՀ կառավարության 2003 թվականի  
մարտի 7-ի N 218 - Ն որոշման

Ձև



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**«ՀԻՂԻՈՒՆԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ»**  
**ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**  
**Անձնագիր N-----**

**հորատանցքի**

Կազմման ժամանակը -----

**I. Տեղադիրքը**

1. Մարզ----- տարածաշրջան -----րնակավայր-----  
-----տնտեսություն-----
  2. Ստորերկրյա ջրերի հանքավայր -----
  3. Գետավազան -----
  4. Ջրավազանային կառավարման տարածք -----
  5. Կոորդինատներ X-----Y-----H-----
  6. Հեռավորությունը մշտական ջրհոսքից (գետից), կմ -----
  7. Տոպոթերթի համարը 1:100000 մշ-ի -----
  8. Հաշվետվության անվանումը -----
  9. Հաշվետվության հեղինակը -----
  10. Պետական գրանցման համարը -----
- II. Երկրաբանական լիթոլոգիական կտրվածքը

Շերտի համարը	Երկրաբանական ինդեքսը	Ծագումը (գենեզիս)	Տեղադրման խորությունը (մ)		Երկրաբանական շերտի հզորությունը (հաստությունը) (մ)	Ջրատար հորիզոնի համարը	Ապարների նկարագրությունը
			առաստաղ	հատակ			

III. Ընդհանուր նկարագրությունը

1. Հորատանցքի խորությունը, մ -----
2. Հորատանցքի վերջնական տրամագիծը, մմ -----
3. Շահագործվող սյան տրամաչափը, մմ -----
4. Հորատման ժամանակը -----
5. Շահագործման ռեժիմը -----
6. Հորատման նպատակը և շահագործման սկիզբը -----
7. Ջրերի տիպն ըստ օգտագործման -----
8. Սանիտարական վիճակը -----
9. Տեխնիկական վիճակը -----
10. Հորատման լուծույթի տիպը -----
11. Կավազրկման եղանակը -----
12. Հորատման եղանակը -----
13. Հորատանցքերի թիվը -----

IV. Ջրիչի բնութագիրը

1. Ջրատար հորիզոնի համարը -----
2. Ջրիչի տրամաչափը և տիպը, մմ -----
3. Ջրիչի տեղադրման խորությունը, սկիզբը -----, վերջը -----

V. Ջրատար հորիզոնի բնութագիրը

1. Ջրերի բացահայտման խորությունը, մ -----
2. Ջրերի մակարդակի վերականգնման խորությունը, մ -----
3. Ջրատար հորիզոնի մեկուսացման եղանակը և միջակայքը -----
4. Խորքային պոմպի տիպը և տեղադրման խորությունը-----





Հավելված N 5  
 ՀՀ կառավարության 2011 թվականի  
 մայիսի 12-ի N 677 - Ն որոշման

«Հավելված N 7  
 ՀՀ կառավարության 2003 թվականի  
 մարտի 7-ի N 218 - Ն որոշման

Ձև

ՀԻԴՐՈԵԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՀՈՐԱՏԱՆՑՔԻ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ  
 ԵՐԿՐԱԲԱՆԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔԸ

Մասշտաբը	Շերտի երկրաբանական ինդեքսը	Ապարների նկարագրությունը և հորատման կատեգորիան	Երկրաբանական կտրվածքը	Հիդրոերկրաբանական պարամետրերը					Հորատման մեթոդը և հաստոցի տիպը		Հորատանցքի կառուցվածքը (սխեմատիկ)	Հորատման տրամագիծը և տեղամասերի խորությունը	Հորատման լուծույթի տեսակը, պարամետրերը և լուծույթի թույլատրելի մշակման մեթոդները	Ամրակապման խողովակաշարի բնութագիրը			Հորատման գտիչի բնութագիրը			Շահագործման պոմպերի բնութագիրը				
				ջրի հաշվարկային դեբիտը, l/վրկ	տեսակարար դեբիտը, l/վրկ	ջրի ստատիկ մակարդակը, մ	ջրի ընդհանուր հանքայնացումը, գ/լ	ջրի ջերմաստիճանը, °C	հարվածաճնշմանային	պտտական				տիպը, տրամագիծը և պատի հաստությունը	միջակայքը, մ	մեկուսացման միջակայքը և մեթոդը, մ	տիպը և տրամագիծը, մմ	երկարությունը և տեղադրման տեղամասը, մ	ծակառվեծությունը, %	տիպը և տրամագիծը, մմ	արտադրողականությունը, մ <sup>3</sup> /ժամ	ճնշման մեծությունը, կգ/սմ <sup>2</sup>	տեղադրման խորությունը, մ	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱՋՄԻ  
 ՂԵԿԱՎԱՐ

Դ. ՍԱՐԳՍՅԱՆ